

ԱՒԵՏԱՐԵՐ



«ԹՈՂ ՏՈՒՒԿ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ.» ԳՈՒԿ ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1906

ԹԻՒ 2

«ՂԱ ՊՈՆ ՆՈՒՎԷԼ» ՇՈՒԿՆԱԻՐ

Բաւական աարիններ առաջ, Կ. պոլսոյ նաւահանգիստը այցելած շոգենաւի մը մէջ պատահեցանք Ամերիկացի եպիս. կոպոսի մը, որուն թեմը Միացեալ Նա. հանգներու Արևմտեան մասին մէջ էր, ուր գեղեր երևան եկած էին երկաթ. ուղւոյ գծին երկայնքովը, որ նոր շինուած էր և կ'իջնար գէպի խողաղականի եզերքը: Եպիսկոպոսը ըսաւ ինձի թէ ինք այդ երկաթուղին վրայ յա-

րագային համեմատ, և եպիսկոպոսը քարոզի պաշտօն կը կատարէր այդ կառքին մէջ:

Հոս ցուցուած շոգենաւը ատոր քիչ մը նման բան մը կը ներկայացնէ: Յիշեալ եպիսկոպոսը աւետարանչութեան կառք մը ունէր, ասիկա ալ աւետարանչութեան շոգենաւ է: Շինուեցաւ 1902ին և կը գործածուի Գաղղիոյ մէջ Ռոն գետին և անոր ճիւղերուն վրայ: Շոգենաւին անունն է «Ղա


ուածներ»։ Այդ ժողովներէն մէկուն ներկայ դաճուած մէկը կ'ըսէ թէ 230 հոգի ներկայ էին և կ'ունկնդրէին մտադրութեամբ, լրջօրէն և փափաքով, և երգերը կ'երգէին զուարթութեամբ և աշխոյժով:

—>>>00<<<—

«ՄԵՐՈՒԿ ՊԵՆՆ»

«Այս գիշեր ցուրտ պիտի ըլլայ», ըսաւ Յակոբ, գէր, խոշոր գործաւորը, որ ամբարանոցէն կու գար, իր մեծ թուխ ձեռքերը կրակին երկնցնելով: Ռուբէն վեր նայեցաւ իր գիրքին վրայէն և շարժեց գլուխը. «Կը մեղքնամ այս հովին մէջ հեռուն գացողը», ըսաւ Յակոբ: «Ձիերն ալ, այնպէս չէ՞, Յակոբ»: «Ո՛հ, ձիերը կրնան դիմանալ: Անոնք սովորած են դուրսը կենալ, և անոնց մորթը թանձր է», պատասխան տուաւ Յակոբ: «Ծերուկ ձին, Պէն, կայ. ծառին տակ կը մանէ և տաքուկ կը մնայ», «Կը յուսամ թէ Պէնը դուրսը չթողուցիր», պոռագ Ռուբէն: «Եթէ դուրսը թողուցիր, սխալ ըրիր, ինչու որ Պէն հաւատարիմ ձի մըն է: Անբան կենդանիներն ալ մարդկային էակներու պէս զգացումներ ունին»: «Բայց կարծեմ Պէն չվաւաստի իր այս գիշեր դուրս մնալով: Յուրաք պինդ պիտի ընէ ձերունի կենդանին, ատկէ զատ շատ ցուրտ է ինձի համար ու չեմ կրնար այս հովուն զանկալ բռնել ներս բերել»: «Բայց ձերուկ Պէնը ամէնէն պատուական ձին է ազարակին մէջ», ըսաւ տղան շուտ մը: «Ես երբեք չեմ ուզեր այդ ձերուկ կենդանին դաշտը թողուլ ասանկ գիշեր մը: Անգթութիւն է ատկեալ»:

Յակոբ չպատասխանեց, բայց քիչ մը խոժոռ աչքերով նայեցաւ տղուն



տուկ կառք մը ունէր, որուն մէջ կ'ընէր իր քարոզութիւններէն շատը: Գեղերէն մէկը անին տակաւին եկեղեցի չունէին և չկար պաշտամունքի յարմար տեղ: Ռուսի բարի եպիսկոպոսին մէկ կարգադրութեան համեմատ երկաթուղւոյ կառքերէն մէկը կանգ կ'առնէր գեղերէն մէկուն առջև, և կը քաշուէր կողմնական գծի մը վրայ, ուր կը կենար օր մը կամ աւելի, պա-

Պոն Նուվէլ» որ Գաղղիերէն «Բարի Լուր» կը նշանակէ: Նստարաններ կան 160 հոգիի համար, բայց 100 հոգի աւելի կրնան ընդունուիլ սրահին մէջ եթէ խիտ նստին: Նաև սենեակներ կան նաւապետին և անոր ընտանիքին և օգնականի մը համար: Սրահին մէջ երգիւն մը կայ, և բեմին վրայ գլուխուած է Յիսուսի սա խօսքը, «Եկէք ինձի, բոլոր յոգնած ու բռնաւոր»:


վրայ, և կրակին առջև տաքնալէն ետ. քը ձեղնայարկի (Թալան իչի) սենեակը ելաւ պառկելու: Ռուբէն ելաւ և պատուհանին առջև գնաց: Յակոբի գուշակութիւնները արդէն կը կատարուէին: Յուրա հով մը ազարակատան պատուհանները կը խօսեցնէր, և սաստիկ ցուրտ գիշեր մը գուշակել տուող նշանները շատ էին: Տղան խիստ հովին ձայնը կը լսէր սարսուռով: Իսկոյն տնէն գուրս սահեցաւ և ամբարանոց գնաց, Ծերուկ Պէնի ախոռէն պախուրոց մը առաւ և գնաց մարգագետինը հանող ճամբէն: Դժուարաւ կը տեսնէր ճամբան, գիշերը շատ մութ էր, և կարծես հովը իր ոսկորներուն մէջէն կը փչէր: Ռուբէն ցանկապատին եկաւ, և կանչեց Պէնը: Քիչ յետոյ Պէն պատասխանեց զուարթ վրնջիւնով և եկաւ: Ռուբէն անոր պախուրցը անցուց և վրան հեծնալով զանկա ախոռ բերաւ: «Ես բնաւ պիտի չթողում քեզ որ չարչարուիս, ծերուկ կենդանի», ըսաւ տղան Պէնի դօրաւոր պարանոցը շոյելով, և երբ զանկա տեսաւ ամբարանոցին մէջ ապահով, առջևն ալ լաւ կերով, նորէն իր գիրքին գնաց:

Հովը քանի գնաց սաստիկացաւ և Յակոբ փոթորիկէն սարսափահար անկողնէն վար նետուեցաւ և գլխի վրայ սանդուղէն վար գլորեցաւ մինչև անոր ոտքը ուր պառկած մնաց գէշ կերպով վիրաւորուած, և բժիշկ ուղեց: Ռուբէնի մայրը քննեց զանկա և շարժեց իր գլուխը: Մարդուն վրձակը ծանր էր: «Ձէ՞ք կրնար Պէնը բերել ժամանակին և վրան հեծնելով բժիշկին երթալ», մրմուռաց Յակոբը: «Պէն մարգագետնէն աւելի մօտ տեղ մըն է», պատասխանեց տղան, և դուրս վաղեց և իսկոյն հեծաւ հաւատարիմ ծեր ձին և վազցուց զանկա ամենամեծ արագութեամբ:

Բժիշկը եկաւ Ռուբէնի հետ և Յակոբ հանգստացաւ: «Ռուբէն ժամանակ չկորսնցուց», ըսաւ վիրաբոյժը հիւանդին: «Եթէ ծերուկ Պէն գաշարը ըլլար փոխանակ ախոռն ըլլալու, դուք անշուշտ մեռած էիք»: Մարդը դեփ դեղին եղաւ և տղուն նայեցաւ: «Երբուկ Պէն ի՞նչպէս ախոռ բերուեցաւ», հարցուց: «Ես զանկա դաշտէն ներս բերի քու անկողին երթալէդ ետքը: Կըսեմ թէ անասուններու քաղցրութիւն ցուցնելը վարձք ունի», ըսաւ Ռուբէն:

Խաչը Յակոբը, ազարակին գործաւորը, երկնցուց իր ձեռքը և Ռու-


բէնի ձեռքը իր ուկրուտ ափին մէջ առաւ: «Կարծեմ ես ասանկ դասի մը գէտք ունէի: Եթէ այսուհետեւ կենդանի մը սառի մարգագետնին վրայ, անիկա ծերուկ Պէնը պիտի չըլլայ», ըսաւ:



ՄԱՊԱՏԱԿԱՆ ՀՈՎԻՆ ԾՈՒՆԸ

Թերեւս չկայ կենդանի մը որ այս տեսակ շունն մը աւելի մեծ իմացողութիւն ցուցնէ: Անիկա անշափարժէք ունի տէրերուն աչքին: Այս պատկերին հետ կապակցութիւն ունեցող պատմութիւնը հետեւեալն է: Ծան տէրը ունէր 20,000 ոչխար, որոնք կ'արածուէին Հիւսիսային Սկոթլոնդ բլուրներուն վրայ, և տէրը շան հանձարը հրարի մը ցուցնելու համար իրիկուն մը նշան դրաւ ոչխարներէն մեկուն վրայ, և յաջորդ առաւօտ զրկեց շունը որպէս զի հօտէն զատէ նշանակեալ ոչխարը և բլուր:

նէր, եթէ անոր շունը իր իմացողութեան շորհիւ հասնէր անոր օգնութեան, և չառաջնորդէր մարդուն բարեկամները այն տեղը ուր կը պառկէր ան:



ՍԵՐ ՌԻՎԵՐՄ ՃՈՆՍ

Այն բաները զորոնք շունի մարդ շատ անգամ ամէնէն ցանկալի բաներն են: Այն օրերը երբ դաստիարակութիւնը մեծ դժուարութիւնով ձեռք կը բերուէր — երբ գիրքերը սուղ և ուսուցիչները քիչ էին — գիտութիւն ստանալու պատեհութիւն չէր փախցուեր: Ասիկա կրնայ լուսաբանուիլ հետեւեալ իրողութիւնով, որ պատահեցաւ հռչակաւոր մարդուն մը կեանքին մէջ: Անոր ծնողքը կարող չէին ունէր դաստիարակութիւն տալ անոր, վասն զի աղքատ էին: Տասներկու տարեկան հասակին մէջ ձմեռուան առաւօտ մը առանձին կա-



նորէն բերէ այսինչ տեղը, Հիւրը հասկցաւ թէ տէրը ճիշդ ի՞նչ ըսաւ շանը, վասն զի կարեւրէն, այսինքն Սկոթլանդացոց հին լեզուով, խօսեցաւ: Ծունը բլուրն ելաւ և շուտով աներևութացաւ, և երկու մարդիկը նոյն ժամանակ ճամբայ ելան երթալ դէպի ուրշեալ տեղը, ուր հասան մէկ ժամ արագ քալելէ ետքը: Գտան շունը որ հոն կը կենար նշանակուած ոչխարին հետ և իրենց կը սպասէր: Ծունը կարճ ժամանակի մէջ զարմանալի բազմաթիւ գործեր ըրած էր, և բուրբովին գոհ կը թուէր իր տէրով շուտ լամ գովեամբերէն: Հիւրին այցելութեան միջոցին շան տէրով սրունքը կտրեցաւ լեռներէն անցնելու ատեն իյնալով, և ձիւնին ներքեւ պիտի մեռ-

նուի ճամբայ ելաւ և քալելով գնաց իր տասներկու մղոն հեռու տեղ մը ուր, լամ էր թէ, զպրոց մը կար: Երբ հոն հասաւ, գտաւ մեծ շէնք մը, և անոր դուռը սպասուհի մը տեսնելով հարցուց ուսուցչապետ Տրայսինը: Սպասուհին տղուն պատրուած հանդերձները տեսնելով, խորհեցաւ թէ արդեօք կարևորութիւն տա՞ր անոր խօսքին: Ի վերջոյ տղուն սաստիկ աղաչանքէն ստիպուելով գնաց: Տղթօրը եկաւ, և ան ալ ապշեցաւ խեղճ պատանին տեսնելով: Բայց ապուրթիւնը աւելի մեծ եղաւ երբ տղան ըսաւ, «Եթէ կը հաճիք, տէր, ես դաստիարակուիլ կ'ուզեմ»: Տղթօրը ըսաւ տղուն թէ դաստիարակութիւնը շատ ստակով կ'ըլլայ,

ըստ նաև թէ քու երևոյթէդ դա-
տելով կարողութենէդ վեր պիտի
ըլլայ անոր համար վճարել: Եւ սա-
կայն զանկա ներս առաւ ու հարց-
ուփորձ ըրաւ անոնց ընտանիքին, ևն.
վրայով, և վերջապէս հաւանեցաւ
անոր դաս տալ դպրոցի ժամերէն
ետքը, անոր յանձնելով կոշիկներ և
դանակներ մաքրելու գործ մը: Տղան
հանդարտաբարոյ էր, առաւօտները
կանուխ կ'ելէր և իրիկունները մինչև
ուշ առեւն կը նստէր դասերը կը պա-
րաստէր, և ժամանակէ մը ետքը
դպրոցին մէջ կառավարչի պաշտօն
ստացաւ:

Այս աղքատիկ տղան եղաւ Սըր
Ռիլերմ ճոնս, թերևս մեծագոյն Ա-
րևելագէտ ուսումնականը որու հա-
մար Անգղիա կ'ընայ պարծիլ: Սըր
Ռիլերմ ճոնս, տղայութեան ատենը
ինչէր չէր տար իննետասներորդ Դա-
րու դպրոցներուն և դաստիարակու-
թեան գիւրութիւններուն համար:

ՄԱՆԿԻՎՆԵՐԸ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Զինաստանի մէջ հեծանիւով ճամ-
բորդած մարդ մը քանի մը հետաքրք-
րաշարժ բաներ կը պատմէ զորոնք տե-
սաւ երկրին հասարակ ճակատ վրայ
չինկող կողմերը ուր ճամբորդներ չեն
այցելեր սովորաբար: Ասոնցմէ մին էր
խումբ մը մանկիկներ որոնք արտի մը
մէջ կը տեսնուէին այժերու կամ որ-
թերու նման: Ամէն մէկ մանկիկ գօ-
տի մը ունէր մէջքը. այս գօտիին ե-
տևի կողմը իբր տասը ոտք երկայն
լար մը կապուած էր, և լարին միւս
ծայրը ցիցի մը հաստատուած էր: Յի-
ցերը իրարմէ աջափ հեռու էին որ
լարերուն իրար խառնուելուն վտանգ
չկար մանկիկներուն սողացած կամ
վազվուտած ատենը: Անոնցմէ մէկ քա-
նին չորս ոտքի վրայ կ'երթային, մեկ
քանին կանգնելու առաջին վորձերը
կ'ընէին հաւասարակշռելով իրենքզի-
րենք ցիցերուն կռթնած, և աւելի
մեծերը կը վազվուտէին կամ կը խա-
ղային խոտերուն մէջ: Ամէն ալ բա-
րեբարոյ և երջանիկ կ'երևնային, և
թէպէտ կը նայէին տարօրինակ օտա-
րականին և անոր հեծանիւին վրայ,
զարմանքի արտայայտութիւնով, չէին
լար կամ չէին երևնար թէ վախցած
են: Կարծես մէկը ուշադրութիւն չէր
տար այս մանկիկներուն, բայց որով-
հետև անոնց մայրերը կը տեսնուէին որ
կ'աշխատէին բրինձի արտի մը մէջ քիչ
հեռուն, հարկաւ կու գային անոնց
քով եթէ պէտք ըլլար: Մանկիկները

առատ մաքուր օդ և արևու լոյս կը
վայելէին և թերևս այնքան աղէկ
վիճակ ունէին որքան տան մէջ աւելի
փափուկ պահուածները:

ՊՈՂՊԱՏԷ ԿԱՄՈՒՐՉ ՆԻԱԿԱՐԱՅԻ ՎՐԱՅ
Հիմակուան կամուրջներէն շատը
ճարտարապետական գեղեցիկ գործեր
են: Կան ամբողջ քարէ կամուրջներ,
որոնք հազարաւոր տարիներ դիմացած
են և մենք կը սքաչանանք անոնց այս-
քան զօրաւոր և հաստատուն ըլլալուն
վրայ: Նոր կամուրջները շատ տկար
կ'երևնան երբ կը բաղդատուին անոնց
հետ, և սակայն գիտական սկզբունք-
ներու վրայ շինուած են և կրնան կրել
անհուն ծանրութիւն: Ինչպէս սիրուն
է կամարը այս կամուրջին որ Նիակա-
րա գետին վրայ ձգուած է ջրվեժէն



քիչ մը վար: Եւ սակայն, ինչպէս կը
տեսնէք, երկու ծանր կառախումբեր
կ'անցնին անոր վրայէն միւսնոյն ատեն
—վասն զի երկաթուղիի երկու զիծ
կայ—որոնց մէկը Միացեալ Նահանգ-
ներէն Գանատա կ'անցնի, և մէկը
Գանատայէ Միացեալ Նահանգները:
Կամուրջը երկյարկ է, քանզի երկա-
թուղիին կառախումբերուն ներքև յա-
տուկ յարկի մը վրայէ ուրիշ ճամբայ մը
կ'երկնայ կառքերու և ոտքով ճամ-
բորդողներու համար:

ԼԳՈՒԱԾ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ
Լքուած (երեսէ ձգուած) մանուկ-
ներու խնդիրը անանկ բան մըն է ու

րու մասին աշխարհ կ'արթնայ կա-
մաց կամաց: Անք մանուկը մեղքնա-
լու արժանի է: Մարդուս սիրտը կը
ցաւի քաղաքի փողոցներուն մէջ թա-
փառող անտերունչ մանուկներուն վրայ,
որոնք երբեք չունին բաւական ուտե-
լիք, չեն գիտեր թէ ինչ է ձմեռը հան-
դիստ պահող հանդերձ հագնել, ա-
նոնց միակ ուսուցիչն է կարօտութիւ-
նը, և այնքան քիչ գիտեն Աստուծոյ
վրայ՝ որքան եթէ Ափրիկէի խորերը
ձնած ըլլային: Բայց լքուած մանուկը
ոչ միայն մեղքնալու արժանի է, հապա
սպառնալիք է: Լքուած այս պղտիկ-
ներէն կ'ելլեն վայրի գազաններ, ու-
րոնք պատուհաս են մարդկային ըն-
կերութեան: Տղայ մը որ երբեք չի-
տակ ապրիլ սորված չէ, ապագային
ոճրագործն է: Լքուած մանուկը զինք

լքած հասարակութեան պատուհասն է
Գանատայի Օնթարիօ գաւառին մէջ
լքուած մանուկները վերկելու գործը
ուղղակի կառավարութեան հսկողու-
թեան և տեսչութեան ներքև կը գըտ-
նուի. բայց գործածուած մեթոտներ
ըր ակնկալուած են կը տարբերին նի-
թապէս: Ամէն մէկ տղայ բարի ըն-
տանիքի մը մէջ կը դրուի, կը շրջա-
պատուի օժանդակիչ ազգեցութիւն-
ներէ և համառօտիւ, անցից անոր
հետ կը վարուին անհասի մը և ոչ թէ
բազմութեան մէկ անդամին հետ վար-
ուելու պէս: Բայց կառավարութիւնն
ալ իր աչքէն չզատեր այս տղաքը.
մինչև անգամ անոնց դրուելն ետքը

այնպիսի տուներու մէջ ուր ազդեցութիւնները աղէկ կը կարծուին : Եթէ հաստատուի թէ այդ մանուկը նրպաստաւոր դիրքի մը մէջ դրուած չէ, և անոր միջավայրը աղէկ չէ, փոփոխութիւն մը կը տնօրինուի : Այս հսկողութիւնը կը շարունակէ մինչև որ մանուկները չափահաս ըլլան և դիրք մը բռնեն կեանքի մէջ : Կառավարութենէն վարձք ընդունող տեսուչներ և մարդաստոր գործիչներ, որոնք սիրով պարտաստ են օգնելու, ամէն մէկ տղու վիճակի վրայ կը հսկեն : Այս օրէնքին գործարդութեան սկսուելէն ի վեր անցած տասնըմէկ տարիներու միջոցին երեք հազարէ աւելի մանուկներ այսպէս դրուեցան ընտանիքներու մէջ, և արդիւնքները վերջին աստիճան զոհարարցիլ եղած են :

Այս մանուկներէն մէկքանին օրէնք կտորոզներ են : Ոմանք ուրիշ յանցանք չունին, բայց միայն իրենց ազգատուութիւնը : Սակայն անոնք ամէն ալ կը դուրսին այնպիսի տեղեր, ուր անդարար կերակուրը, քաղցր վարմունքը, մաքուր օդը և ընտանեկան միջնորդարը իրենց օգտակար դերը կը կատարեն : Եւ այս ազդեցութիւններուն շնորհիւ մանուկները, որոնք շատ դիւրութեամբ կրնային ոճրագործներ և թափառաչողիկներ ըլլալ, կ'ըլլան անձնական արժանապատուութեան զգացումի տէր մարդեր ու կիներ և պատուաբեր թէ՛ հանրութեան և թէ՛ իրենց ընդունած կրթութեան :


ՔԱՂՅՐ ՎԱՐՄՈՒՆՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ պատմութիւնը իրլանտացի մը ըրած է .

«Ես երկրագործութեան աշխատութիւններու մէջ յաջողած չեի, բայց որոշեցի սորվիլ : Զիս վարձող ագարակատէրը շատ լաւ կը վարուէր իր բոլոր անասուններուն հետ, և կը յաջողէր ընել տալ անոնց ճիշդ ինչ որ ուզէր : Օր մը երբ եղնեքը ըծած էր, ձեռքս ձող մը տուաւ ու լսաւ : «Տղայ, տեսնեմ ի՞նչպէս պիտի վարես այս արջառնները : Խօթանք ձեռքս առի և սկսայ եղներուն խօսիլ, ինչպէս լսած էի ագարակատէրոյ խօսիլը : ձողը շարժելով շատ իշխանական կերպով մը, բայց եզները շարժեցին իրենց գլուխները և վերցնելով իրենց թաթերը սկսան վազել մարգագետնին վրայ : Ես ալ վազեցի զանոնք դարձնելու համար և ամէն անգամ որ կը մօտե-

նայի՝ հարուած մը կու տայի անոնց : Այնուհետև սկսայ ուսումնասիրել խընդիրը, և դիտեցի թէ երբ ագարակաւորը արջառններուն քովերը կ'երթար, շատ անգամ իր վերարկուն խոշոր գրպանները լեցուցած կ'ըլլար եզիպտացորենի հասկերով զորոնք արջառնները կ'ուտէին իր ձեռքէն : Ասոր վրայ ես ինքնիրենս ըսի : «Ինչո՞ւ ես ալ սիրելի չըլլամ այդ անասուններուն այդ նոյն կերպով : Ամբարանցին մէկ կողմէն երկար Ուրբ մը եզիպտացորենի հասկեր կարուած էին : Ուստի օր մը գրպաններս լաւ մը լեցուցի անոնցով և բակը գացի ուր եզները կը գանուէին, և խոշոր, գեղեցիկ, դեղին հասկ մը երկնցուցի ծերուկ եղին : Տարօրինակ նայուածք մը ձգեց եզը իմ վրաս իր մեծ և փափուկ աչքերովը, կարծես ըսել ուզելով թէ մտածած չէր անցեալ օրուան իրեն հետ ունեցած վաղքս : Բայց ես շարունակեցի աւելի մօտենալ եզիպտացորենին հասկը ձեռքս բռնած, մինչև որ վստահ եղայ թէ ուշադրութիւնը գրաւեցի : Այնուհետև կեցայ : Անկա իր գլուխը քիչ մը մէկ կողմ դարձուց, ախանջները շարժեց, յետոյ քայլ մը իմ կողմն եկաւ և դուրս երկնցուց իր մեծ կարմիր լեզուն : Ես կեցայ եզիպտացորենի հասկը բռնած, և ալ այնուհետև երբեք դժուարութիւն չունեցայ եղներուն հետ :»

Մարդը այս պատմութիւնը ընելէն ետքը սա խօսքը աւելցուց . «Եթէ քաղցր վարմունքը այս ներգործութիւնը կ'ընէ եզներուն վրայ, ինչո՞ւ չիորձենք զանկա մարդոց վրայ :» Եւ մենք մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք այս խնդրին : Իրաւ որ կ'արժէ ընել այս փորձը :



ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԻ ՈՒՍՈՒՅՉՈՒԹԻՒՆ

Պատուաւոր անձ մը կայ ֆանատայի Օթարիօ նահանգին Լոնտոն քաղաքին մէջ, որ վաթսուն տարիներէ ի վեր ուսուցչութիւն կ'ընէ : Անունն է Նիքոլաս Ուիլսոն, և նոր սերունդի տղաքը, որոնց դաստիարակութեան մէջ մաս մը ունեցած է այս անձը, զանկա Եթեր Նիք կ'անուանեն : Ասկէ տասը տարի առաջ անոր նախկին աշակերտները որոշեցին յարգանաց նիւթական արտադրարարութիւն մը ընել անոր : Այս գաղափարը այնպէս դիւրաւ ընդունելութիւն գտաւ, որ անմիջապէս յատուկ նուագահանդէս

մը կազմուեցաւ, և անոր հասոյթը, 250 Անգղ. ոսկի, նուիրուեցաւ Մր. Ուիլսոնի : Անոր Պրֆէյօ և ուրիշ քաղաքներ բնակող նախկին աշակերտներէն պատուիրակութիւն մը անոր պատիւ ընելու գնաց : Խանդավառ համախմբում մը եղաւ ասիկա, և անկէ ծագում առաւ «Լոնտոնի ընթացաւարտներու» ընկերութիւնը, ասկէ ալ միջազգային ընկերակցութիւնը, որ ճիւղեր ունի ֆանատայի և Միացեալ Նահանգներուն գլխաւոր քաղաքներէն շատին մէջ : Երկու տարին ասգամ մը ժողով մը կը գումարուի, երբ Լոնտոնի ընթացաւարտ տղաքներէն ու աղջիկներէն հազարաւորներ, որոնք մեկնած են իրոնց ծնրնաղափայր քաղաքէն, քանի մը օրուան այցելութեան և իրենց հին ծանօթներուն հետ տեսակցութեան համար հոն կը վերադառնան : Այս ժողովներուն մէջ Մր. Ուիլսոն է կեդրոնական դէմքը : Թէ՛ քաղաքին մէջ թէ՛ դուրսը երևելի հանդիսացող Լոնտոնցի քիչ ընթացաւարտ տղաք և աղջիկներ կան որոնք անոր ձեռքերէն անցած, անկէ դաստիարակուած չեն, և անոնց իւրաքանչիւրը ունի բան մը որու համար շնորհակալ կ'ըլլայ և որուն միջոցաւ կը յիշէ զանկա :

1905ի ժողովին մէջ «Լոնտոնի ընթացաւարտները» նորէն պատուեցին իրենց ուսուցիչը և բարեկամը : Անոր բնական մեծութեամբ իւղաներկ պատկերը շինած են, որ հանդէսով դրուեցաւ Լոնտոնի գոլէճի շէնքին մէջ, ուր Մր. Ուիլսոն ուսուցչութիւնը վերջին քսանընէր տարիներու մէջ : Մր. Ուիլսոն տակաւին պահած է իր կորովը և աշխոյժը : Արագաշարժ է և կը պահէ պատանեկան նոյն յստակ խնացողութիւնը, նոյն ոյժն ու նախանձաւորութիւնը, երբ կը խրախուսէր ճամբարարութիւնը և կը հաղորդէր գործնական արժէք ունեցող ուսումը : Ասոնք անոր յատականիշն եղած են ուսուցչական պաշտօնին սկիւղէն ի վեր :

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ կանիթիկ, ամէն տեղոյ համար :

Ամերիկայի Մեթիսարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Ք. Կրիւն Տնօրէն—Խմբագիր Է. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈ ՊՕՍԱՆՆՆՆ
 Ֆինանսըլար Եօզուչու, Ամերիգան Խան